ԿԱՐԵՆ ՍԱՐԳԱՎԱԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ինչ-որ մեկը նայում է, բայց չի տեսնում Խոսքը:
Ինչ-որ մեկը լսելով՝ չի լսում նրան:
Բայց նա ինչ-որ մեկին իր մարմինն է տալիս,
Ինչպես կրքոտ կինն է գեղեցիկ զարդերով զրվում ամուսնուն:
«Հին Արեւելքի Պոեզիա»

ԼՈԳՈՍԸ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

Մարդկության քաղաքակրթության պատմության ողջ ընթացքում քարայրաբնակ մարդուց մինչեւ քսանմեկերրորդ դարի հոգեւոր զարգացման ծիրերում առկա ոգու եւ մարմնի պայքարը ճանապարհ է հարթել մարդկային Ես-ի ձեւավորման եւ բնությունից նրա բաժանման համար:

Ինչ՞ գործոններ էին նպաստում այս հանգամանքին: Անսահման է բնությունը, անսահման է նաեւ մարդկային հոգին: Այն կապված է աստվածային Հոգու հետ, եւ անմիջականորեն նրանից է սպանում իր կենսական սնունդն ու աճը: Պատմության ընթացքում աստվածային Հոգու այդ դրսեւորումը կոչվել է Լոգոս, որը հունարեն բառ է եւ նշանակում է՝ 1. խոսք, ասված բան, 2. Բան՝ Հովհաննես ավետարանչի քրիստոնեաբանության մեջ, 3.հաշիվ, հաշվարկ, 4. արժեք, 5. պատճառ, հիմք, 6. գործ, իր: Լոգոսը, բնակվելով մարդկային մարմնի մեջ, իմաստ է տալիս նրա կյանքին: Կարծես մի տեսակ հարաբերություն է ստեղծվում մարդկային գիտակցության եւ աստվածային անսահմանության միջեւ:

Մարդկության պատմությունը մարդու մի կյանքի պատմությունն է,ավելին, ամեն ինչ Աստծո Հոգու պատմությունն է, որը մի կողմից ժամանակային չափանիշներ է դրսեւորում, իսկ մյուս կողմից չի ենթարկվում ֆիզիկական եւ ոչ մի սահմանափակության:

«Լոգոսը փիլիսոփայական համակարգերում» վերնագիրը ենթադրում է պարզաբանել, թե վերոնշյալ խնդրի վերաբերյալ՝ մշակույթների պատմության (փիլիսոփայական մտածողության իմաստով) ընթացքում, ինչ գաղափարներ են արտահայտվել, եւ որքանո՞վ են ազդել հետագայում ձեւավորված պատկերացումների վրա: Մեր նախաձեռնած աշխատանքն սպառիչ չէ, թերի է այն իմաստով, որ չենք անդրադարձել Լոգոսի մասին արտահայտած բոլոր մատենագիրներին եւ փիլիսոփայական դպրոցներին, ինչը մեր ուժերից վեր էր: Հարկ է միայն նշել, որ քրիստոնեական եկեղեցու՝ Լոգոսի մասին ուսմունքի ձեւավորման գործում (փիլիսոփայական, այլ ոչ թե կրոնական իմաստով) մեծ դեր են խաղացել ալեքսանդրյան եւ անտիոքյան աստվածաբանական դպրոցները:

ԽՈՍՔԻ ՈՒԺԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Ըստ եգիպտական մի ավանդության, որը նկարագրված է «Եգիպտական մեռյալների» գրքում[1], փիեզերքի արարիչ Խեպրին, կամենալով ստեղծել արարածներին կամ բոլոր գոյությունները, նախ եւ առաջ արտաբերեց իր անունը եւ առաջ բերեց ինքն իրեն, իսկ երբ որեւէ բան ցանկանում էր ստեղծել, նախ այդ առարկայի անունն էր տալիս եւ դա ինքն իրեն հայտնվում էր (հմմտ. Ծնն. Ա, 3): Տեքստը հայտնում է, որ Խեպրին վերոնշյալ ծրագրերն իրագործելու համար խորհում էր իր սրտում եւ հետո արտաբերում կոնկրետ անունները, ու դրանք հայտնվում էին: Խեպրիին իր գործերի ընթացքում օգնում էր Մաատ աստվածուհին, ով իմաստության խորհրդանիշն էր (հմմտ. Առակաց Ը, 22):

Եգիպտական աստվածուհի Իզիդան, կամենալով իմանալ երկնային փիրակալ Ռա աստծո անունը, հրամայում է օձին խայթել նրան: Երբ Ռան դուրս է գալիս զբոսնելու, օձը խայթում է նրան, եւ Ռայի վիճակը կտրուկ վատանում է: Միայն Իզիդան կարող էր փրկել Ռային, որովհետեւ փիրապետում էր մոգական բանաձեւերին, որոնց շնորհիվ հրաշագործություններ էր անում: Հնում հավատում էին, որ որեւէ մեկի անունն իմանալով տվյալ անձնավորության զորությունն անցնում է իմացողին. այդ պատճառով էլ Իզիդան ցանկանում էր իմանալ Ռայի իսկական անունը[2]: Ռան, խաբելով Իզիդային, ասաց, որ իր իսկական անունը հետեւյալն է. առավոտյան նա Խեպրին է, կեսօրին՝ Ռան, իսկ երեկոյան Աթումը՝ բայց Իզիդան չխաբվեց եւ չբուժեց Ռային: Այս անգամ արդեն Ռան ստիպված էր հայտնել իր զորության ակունքն ու պատվիրեց Իզիդային անունը փնտրել իր ներսում, այսինքն՝ սրտում, եւ դրանով իսկ Ռայի սիրտը (զորությունը) անցավ Իզիդային: Իզիդան իր մոգական բառերով բժշկեց Ռային, սակայն Ռան զրկվեց իր գահից:

Հին եգիպտացիները հավատում էին, որ յուրաքանչյուր խոսք օժտված է զորությամբ (էներգիայով), եւ կարող է ինչպես դրական, այնպես էլ բացասական հետեւանքներ թողնել մարդկանց եւ նրանց կյանքի ընթացքի վրա[3]: Դրա պատճառն այն էր, որ արարչությունն իրականացավ աստվածային խոսքի հետեւանքով:

ԼՈԳՈՍԻ ԴԵՐԸ ՀՆԴԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Համաշխարհային մշակույթի ձեւավորման եւ զարգացման մեջ Հնդկաստանը եղել է առաջատար երկրներից մեկը: Իր «վեդաներով», «ուպանիշադներով», աննման «Ռամայանայով» հնդկական հոգեւոր արժեքները ներթափանցել են ողջ աշխարհի մշակութային գանձարանի մեջ եւ թողել իրենց անուրանալի հետքը: Հնդիկներն այն ժողովուրդներից էին, ովքեր ունեին խոսքի իրենց աստվածուհին՝ Սարասվատիի գլխավորությամբ: Սարասվատին համարվում էր ճարտասանության եւ իմաստության, արվեստների եւ գիտության հովանավոր, սանսկրիտի ստեղծող: Նա նաեւ Բրահմայի կինն էր, որը եռաստվածության մեջ

1 Տե՛ս **Э. А. Уоллис Балж**, Египетская Книга Мертвых, Москва, 2005, ст. 15.
2 Տե՛ս անդ, էջ 26-27:
3 Տե՛սանդ, էջ 227:

կենտրոնական տեղն էր զբաղեցնում: Սակայն վեդայական գրականության մեջ, որպես սրբազան խոսքի մարմնացում (իգ. սեռի աստվածություն), կա եւս մեկը՝ Վաչը, որն Ինդրայի կինն է: Նա բնակվում է երկնքում եւ երկրի վրա,[4] ընդգրկում է ամբողջ աշխարհը, իր մեջ կրում Վարունային, Ինդրային, Ագնիին, Աշվինաներին, Սոմային եւ Տվաշտառային. այսպիսով՝ Վաչը աստվածների թագուհին է: Բրահմանները նրան անվանում են «վեդաների մայր»: Ըստ ավանդության՝ Վիշնուն իր երեք քայլերի հետեւանքով ձեռք բերեց ամբողջ աշխարհը, վեդաներն ու Վաչիին: Իսկ համաձայն «Շատապաթարիա-բրահմանի»՝ Պրաջապատին ջրերն ստեղծեց խոսք-Վաչիի կերպարով: Ընդհանրապես հնդկական մշակույթի համար բնորոշ է խոսքի հանդեպ երկրպագությունը: Ըստ Ն. Գումիլեւի՝ «Արեւը կանգնեցնում էին խոսքով, խոսքով կործանում էին քաղաքներ»: Խոսքն ստեղծարար էություն է, ստեղծագործող էներգիա. այստեղից էլ առաջացել է Վաչի մասին պատկերացումը՝ որպես տիեզերական եւ տիեզերաստեղծ էության: Պետք է նշել նաեւ, որ «Աթհահավեդայում» Վաչը համարվում է սիրո աստված Կամիի աղջիկը: Վաչը կարող է ընդունել զանազան ձեւեր, քանի որ բոլորի սնունդն է ու բոլորն ապրում են նրանով:

Խոսքի տարրերը համանման են տիեզերքի տարրերին. բաղաձայնները համահունչ են գիշերներին, ձայնավորները՝ ցերեկներին եւ այլն: Վաչի «նյութական մարմնացումը» աստվածային հանգն է՝ ԱՈՒՄ (ՕՄ), ինչը հնդիկ միստիկ Սվամի Վիվեկանանդան անվանել է «խոսքի բոլոր սրբություններից սրբազնագույնը»: Նա նույնպես ասում էր, որ ամբողջ տիեզերքը ստեղծված է հավիտենական ԱՈՒՄ-ից»[5]: Այս ԱՈՒՄ-ը սիմվոլիկ լեզու է, որը խորհրդանշում է Ա-սկզբնական էներգիան, Ու-ստեղծագործող էներգիան, Մ-բնական էներգիան, ջրի էներգիան: Այս երեք տառերը խորհրդանշում են նաեւ հնդկական պանթեոնի երեք գլխավոր աստվածությունները՝ Ա-Բրահման, Ու-Վիշնուն, Մ-Շիվան:

Վերն արդեն տեսանք, որ Վաչը խորհրդանշանաբար համեմատվում էր ջրերի հետ: Ջրերի հետ է հարաբերվում նաեւ Սարասվատին, որովհետեւ Հնդկաստանի գետերից մեկը հենց իր անունով է կոչվում, եւ համարվում է «հոսանքների մայրը»: Սարասվատին ունի նաեւ այլ հատկություններ. նա իրենով լցնում է ամբողջ տարածությունը, ընկնում է երկնքից կամ բարձր լեռից եւ զոհաբերությունների ժամանակ ունենում է իր մասն ու բաժինը[6]: Այս հատկությունները հատուկ են նաեւ երկնային գետի աստվածուհի Գանգային: Սարասվատին բժշկություն եւ բարիքներ բաժանող է:

Բուդդիզմում խոսքի նշանակությունը չափազանց կարեւոր է. յուրաքանչյուր խոսք, ինչպես դրական, այնպես էլ բացասական ձեւավորում է մարդու *կարման* (հոգեւոր այն վիճակը, որը կանխանշում է հաջորդ կյանքում մարդու կենսակերպը): Մարդու խոսքը, մտածումները, կենսակերպը անպայմանորեն ներազդում են ոչ միայն իր, այլեւ շրջակա մարդկանց եւ բնության վրա[7]:

Հնդկական գրականության մեջ հաճախակի են հանդիպում Խոսքին նվիրված ձոներ, աղոթքներ, օրհներգություններ, որոնցից մեկն էլ հետեւյալն է.

---

4 Տե՛ս "Индийская мифология. энциклопедия", Москва, 2005, стр. 50.
5 Անդ, էջ 51:
6 Տե՛ս անդ, էջ 116:
7 Տե՛ս **Девид Понд**, Запад в поисках Востока, Москва, 2004, стр. 51.

Ես Ռուդրայի, Վասուի հետ եմ,
Ադիթների եւ բոլոր աստվածների:
Ես կրում եմ Միթրային ու Վարունային,
Ինդրային ու Ագնիին, Աշվիններին:
Ես կրում եմ անզուսպ Սոմային,
կրում Թվաշթարին, Պուշանին եւ Բհագային:
Ես հարստություն եմ տալիս զոհաբերողին,
նրան, ով ջերմեռանդ կատարում է ծեսը զոհաբերության,
սոմայի հյութը քամում:
Ես փիրակալ եմ, հարստություններ հավաքող:
Ես առաջինն եմ մտածում այն մասին,
թե ի՞նչ է արժանի զոհաբերության:
Այդպես են ստեղծել ինձ աստվածները-
միշտ ամենագո եւ ամենակերպ:
Իմ շնորհիվ սնունդով հագենում է նա,
ով տեսնում է, շնչում եւ լսում ասվածը:
Դա չիմանալով՝ իմ իշխանության տակ են:
Լսիր ինձ, օ՛, ունկնդիր: Ես քեզ ճիշտն եմ ասում:
Ես ինքս եմ ասում՝
ինչ է պետք մարդկանց եւ աստվածներին:
Ում սիրում եմ՝ նրան ուժեղ եմ դարձնում,
մեկին՝ բրահման, մյուսին՝ ռիշի, մյուսին՝ իմաստուն:
Այդ ես եմ ձգում աղեղը Ռուդրայի-
խոցելու աղոթքի ատելիներին:
Ես մարդկանց միջեւ վեճեր եմ ծնում,
ապրում եմ երկնքում եւ երկրի վրա:
Ես ստեղծում եմ այս աշխարհի հորը, նրա գլուխը,
իմ արգանդը ծովում է, ջրերի մեջ,
ես այդտեղից փռվում եմ աշխարհների վրա,
մեծությամբ հասնում եմ երկնքին,
փողփողում եմ այնտեղ ինչպես քամի,
բոլոր աշխարհներն ընդգրկելով,
ես երկնքից բարձր եմ, աշխարհից լայն-
այդքան մեծ եմ դարձել[8]:

Հին արեւելքի հոգեւոր ավանդության մեջ խոսքի նկատմամբ կար երկու տեսանկյուն.

1. Խոսքով չի կարելի արտահայտել իրականությունը:

2. Բառերն ընդունակ են բացահայտելու հոգեւոր եւ նյութական կեցության իմաստները:

Ինչպես ասում էր Բոդհիդհարման (դզեն բուդդիզմի առաջնորդներից մեկը)՝ «Չարժե

8 «Հին Արեւելքի Պոեզիա», Երեւան, 1982, էջ 281-282:

հիմնվել բառերի եւ գրությունների վրա, քանի որ մտային կառույցները, որոնք կապված են բառերի հետ, ոչ այլ ինչ են, եթե ոչ անգիտությամբ խավարած գիտակցության գործունեություն»[9]:

Ի հակակշիռ վերոնշյալի՝ երկրորդ ուղղությունը գտնում է, որ բառերն իրենց իմաստային բովանդակությամբ վկայում են գիտակցության եւ այդ գիտակցությամբ բարձրագույն իրականությանը հասնելու կարողության մասին: Այս առիթով չինացիները տարբերակում են երկու տեսակի բառեր. առաջինը «մահացած» (սի ցզյույի) եւ երկրորդը՝ «կենդանի» (խո ցզյույի). այս երկուսն էլ ցույց են տալիս գիտակցության երկու տարբեր վիճակները՝ խավարած եւ լուսավորյալ[10]:

ՀԵՐԱԿԼԻՏԵՍԸ ԼՈԳՈՍԻ ՄԱՍԻՆ

Հերակլիտեսի (Ք.ա. 544-480) փիլիսոփայության մեջ Լոգոսն անբաժանելի է հրից եւ օդից: Այն միաժամանակ եւ՛ նյութական է, եւ՝ վերացական, բնազանցական: Հերակլիտեսը գտնում է, որ գոյություն ունի մի աստվածային համաշխարհային բանականություն, որի անմիջական միջամտությամբ մարդկությունը հաղորդակից է դառնում Իմաստին[11]: Բացի այդ, Հերակլիտեսի Լոգոսը հանդես է գալիս որպես «ճակատագրի էություն», «տիեզերական կարգ ու կանոնի չափանիշ եւ ժամանակի ուղղորդիչ»[12]:

Մարդկային բանականությունն աստվածային Լոգոսի պատկերն ու մասնիկն է, սակայն քչերին է հաջողվում հասկանալ եւ ունկնդրել նրա ձայնը[13]:

Հերակլիտեսի փիլիսոփայությանը հատուկ է տիեզերքի հավերժության եւ անժամանակյա լինելու գաղափարը. «Այս տիեզերքը, -ասում է նա-, միեւնույնն է բոլորի համար. աստվածներից, մարդկանցից ոչ մեկը չի ստեղծել այն, բայց նա միշտ եղել է, կա ու կլինի մշտապես կենդանի կրակ, միաչափ վառվող, հավասարապես հանգչող»[14]: Աստվածային Բանականության առավելությունն այն է, որ նրա համար ամեն ինչ լավ է, գեղեցիկ, ճշմարիտ, իսկ մարդիկ տարաբաժանում են կյանքը՝ լավի եւ վատի, գեղեցիկի եւ տգեղի, ջարի եւ բարու[15]:

ԼՈԳՈՄՆ ՍՏՈՅԻԿՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Համաձայն ստոյիկների՝ նյութական մարմինների մեջ առկա լոգոսը կազմում է նրանց էությունը, կենդանություն, ձեւ եւ շարժում է տալիս գոյություններին՝ ինքը մնալով նախասկիզբ ու հավիտենական Աստծո արտահեղում: Որոգինեսն այն անվանում է. «մարմնա-

9 **М. Ф. Албедиль**, Зеркало Традиций.Человек в поисках традициях Востока, Санкт-Петербург, 2003, стр.204.

10 Տե՛ս անդ, էջ 205:

11 Տե՛ս **А. Ф. Лосев,** История античной эстетики, т.1, Москва, 2000, стр.388-389.

12 Անդ, էջ 416:

13 Տե՛ս **Սկյրան Զաքարյան**, Փիլիսոփայության պատմություն, Երեւան, 2005, էջ 38:

14 Религии Мира, Язичество, Минск, 2006, стр.207.

15 Տե՛ս անդ, էջ 210:

կան ոգի» (pneuma somaticon)[16]: Այդ համաշխարհային լոգոսն ստոյիկները նույնացնում էին ճակատագրի հետ:

Լոգոսը տիեզերական այն կարգ ու կանոնն է, որի շնորհիվ եւ որի մեջ գոյատեւում են նյութական բոլոր մարմինները, կենդանական աշխարհը եւ նույնիսկ աստվածները: Հենց այդ կարգն էլ ստոյիկներն անվանում են ճակատագիր, «բնական օրենք», այն ինչ որ եղել է, լինում է եւ պետք է լինի՝ համաձայն օրենքի:

Ստոյիկների տիեզերաստեղծ լոգոսը կոչվում էր «սերմ-լոգոս». նախ նա ստեղծում էր չորս տարրերը, եւ հետո, ինչպես սերմից՝ բույսերը, այնուհետեւ առաջանում էին բոլոր մարմինները[17]: Բայց այդ սերմ-լոգոսներն արտահեղվում են գեղագետ կրակից, խելացի աստծուց ու հավիտենական են: Լոգոսն իր հատկություններով միավորում է բոլոր մարդկանց եւ աստվածներին, որոնք բանական էություններ են: Մարդկային հոգին, հաղորդակից դառնալով ամեն ինչ ընդգրկող Բանականության հետ, միանում է տիեզերքին եւ դառնում նրա մի մասնիկը[18]: Ի դեպ, ստոյիկների կարծիքով, Զեւսը կամ Տիեզերական լոգոսը պարունակում է եւ՛ չարը, եւ՛ բարին[19]: Ինչպես տեսնում ենք, ստոյիկների փիլիսոփայության մեջ արտահեղված լոգոսն անցնում է զարգացման շրջան՝ բարձրից ցածր եւ ցածրից բարձր: Ստոյիկները Հերակլիտեսի նման ընդունում էին, որ 10800 տարին մեկ ողջ տիեզերքը կրակով հասնում է իր վախճանին եւ նորից հարություն առնում[20]:

Կյանքում պատահած անհաջողություններն ստոյիկները վերագրում էին Տիեզերական Բանականությանը, ով պատժում է հիմարներին (ովքեր չեն ապրում բնության օրենքների համաձայն) եւ վարձատրում իմաստուններին: Նյութական է ամեն ինչ, նույնիսկ աստվածները, հոգին եւ իրերի որակները[21]:

Լոգոսը բաժանվում է երկու մասի՝ բացասական կամ անկենդան մասնիկների եւ դրական, ակտիվ, որն էլ, միավորվելով անկենդան լոգոսի հետ, ձեւավորում ու շարժում է նյութական մասնիկները: Ակտիվը հանդես է գալիս որպես կրակ եւ օդ, իսկ պասիվը՝ հող եւ ջուր[22]:

ԼՈԳՈՍԻ ԴԵՐԸ ՓԻԼՈՆ ԵԲՐԱՅԵՑՈՒ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔՈՒՄ

Փիլոն Եբրայեցու փիլիսոփայության մեջ Լոգոսը հանդես է գալիս իբրեւ միջնորդ Աստծո կողմից ստեղծված արարածների միջեւ: Լոգոսն իմաստ է հաղորդում կյանքին: Նա «երկրորդ աստված» է, «Աստծո Որդի», բայց ոչ այն որդին, որը ծնվում է հավիտենության մեջ, չի ենթարկվում ժամանակային չափանիշներին ու չի պատկանում գոյի ցածր մակարդակներին[23]: Լոգոսին բնութագրելու համար Փիլոնն օգտագործում է մի շարք անվանումներ, ինչպես օրինակ՝ «Տիրոջ գործիք», «Աստծո հինավուրց Որդի», «Տիրոջ առաջնածին», «ստվեր», «հրեշտակ», «առաքյալ», «մխիթարիչ», «նախաքահանայապետ» եւ այլն:

16 Տե՛ս А. Ф. Лосев. նշվ. աշխ. հ. 5, էջ 136:
17 Տե՛ս անդ, էջ 142:
18 Տե՛ս անդ, էջ 143:
19 Տե՛ս անդ, էջ 210:
20 Տե՛ս Սեյրան Զաքարյան, նշվ. աշխ., էջ 98:
21 Տե՛ս Религии мира.,ст.274.
22 Տե՛ս անդ, էջ 275:
29 Տե՛ս А.Ф.Лосев, նշվ. աշխ., հ. 5, էջ 109:

Փիլոնի լոգոսը նույնանում է աստվածաշնչյան Իմաստության հետ (հմմտ. Առակաց Ը): Լոգոսի կամ Իմաստության խնդիրը գոյերի միջեւ ներդաշնակություն ստեղծելն ու մարդկանց Աստծուն մոտեցնելն է: Փիլոնյան Լոգոսն անհատ չէ, այլ՝ Աստծո Բանականությունն է[24]: Լոգոսը Աստծո Խոսքն է, որի միջոցով Աստված ինքն իրեն բացահայտում է մարդկանց: Այստեղ նույնպես իշխում է աստիճանակարգության գաղափարը՝ վերից դեպի ստորինը:

ՀՐԵԱ-ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԼՈԳՈՍԻ ՄԱՍԻՆ

Աստված մարդու դեմքին շունչ փչեց, եւ մարդը եղավ կենդանի էակ: Այսպիսով՝ մարդը նմանվեց Աստծուն, դարձավ աստվածային էակ՝ մաքուր, միամիտ եւ առանց մեղքի: Աստված մարդուն իր նմանությամբ մի էակ տվեց, որպեսզի մարդը միայնակ չլինի աշխարհում: Աստված նաեւ իր իմաստությամբ տաբու դրեց նրանց առջեւ, որպեսզի նրանք կարողանան աճել, զարգանալ: Փաստորեն մարդկության հոգեւոր պատմության սկիզբն աստվածադիր է: Օձը, որը խորհրդանշում էր իմաստության եւ սեռականության աստվածությունը հին աշխարհում, կնոջ էության մեջ գործելով, անցնում է աստվածային տաբուն եւ սկսվում է հոգեւոր աճը, որովհետեւ, կտրվելով Աստծուց, բնությունից եւ իր մեջ կրելով Արարչի անսահման էությունն ու մեղավորության զգացումը, մարդը հարկադրված էր կամ մնալ իր այդ «անկյալ» վիճակում, կամ էլ՝ վեր բարձրանալ եւ ձուլվել իր Տիրոջ մեջ: Հետագայում մարդիկ բազմացան, հպարտացան եւ կործանում բերեցին իրենց վրա համաշխարհային ջրհեղեղով: Նրանք այնքան հպարտ էին, որ այն ամենը, ինչ ունեին, վերագրում էին իրենց: Իրենք իրենց, առանց Աստծո աստվածներ էին պատրաստում, որոնք ոչ այլ ինչ էին, եթե ոչ իրենց հոգու արտացոլումները: Անցան հազարամյակներ, բայց մարդկությունը չէր գտնում դրախտ հասնելու ճանապարհը, որովհետեւ այն երկսայրի սրով փակ էր, ինչը հենց Լոգոսի խորհրդանիշն էր: Մարդկային փրկության համար, Աստված ուղարկեց իր Բանին, Ով մարմնանալով մարդացավ, որպեսզի քանդի անջրպետը մարդու եւ Աստծո միջեւ: Անջրպետը վերացավ Քրիստոս աստվածմարդու խաչելությամբ եւ մահվան նկատմամբ հաղթությամբ: Ահա արդեն երկու հազար տարի է, ինչ մարդիկ մեռնում եւ հարություն են առնում:

Մենք գիտենք, որ Աստվածաշունչը հրեական գրականության գոհարներից է, բայց չպետք է մոռանալ, որ այլ ազգերի եւ ուսմունքների մեջ էլ կան բազում դրվագներ, որտեղ արտացոլվում է Աստվածային Լոգոսի դրսեւորումը մարդկային պատկերացումների, երազանքների, առասպելների եւ հոգեւոր-մշակութային կյանքի այլեւայլ դրսեւորումների մեջ:

30 Տե՛ս անդ, էջ 127: